Հավելված N 2
ՀՀ վարչապետի
N 774-Ա որոշման

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԵՎ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՈԼՈՐՏԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգով կարգավորվում են Պրոբացիայի ծառայության, Քրեակատարողական ծառայության, պետական այլ գերատեսչությունների և շահագրգիռ կողմերի միջև միջգերատեսչական արդյունավետ համագործակցության խթանման նպատակով ստեղծված պրոբացիայի և քրեակատարողական ոլորտին առնչվող հարցերի քննարկման խորհրդակցական հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) գործունեության հետ կապված հարաբերությունները:

2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Քրեակատարողական օրենսգրքով, «Պրոբացիայի մասին» օրենքով, ոլորտը կարգավորող այլ օրենսդրական և ենթաօրենսդրական իրավական ակտերով և սույն աշխատակարգով:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

3. Հանձնաժողովը խորհրդակցական մարմին է, որը պետական լիազորված մարմինների արդյունավետ համագործակցությամբ ապահովում է նշված մարմինների միջև մշտական հաղորդակցությունը՝ քրեակատարողական և պրոբացիայի ոլորտների օրենսդրական և գործնական խնդիրների վերհանման, հասցեագրման և գույքագրման, դրանց լուծման արդյունավետ ուղիների որոնման և հստակեցման, ինչպես նաև նշված ոլորտներում տեսլականների քննարկման նպատակով:

4. Հանձնաժողովի գործունեությունն ուղղված է արդարադատության ոլորտում իրականացվող բարեփոխումների համատեքստում ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի շարունակական կատարելագործմանը՝ իրավակիրառ գործունեության ընթացքում վերհանվող խնդրահարույց իրավիճակների և բացերի, պրակտիկայում ի հայտ եկած տարբեր խնդիրների լուծման, ինչպես նաև շարունակական ի հայտ եկող այլ կարիքների բացահայտման արդյունքում անհրաժեշտ ոլորտային փոփոխությունների իրականացման միջոցով:

5. Հանձնաժողովի անդամները, այդ թվում՝ հանձնաժողովի նախագահը, հանձնաժողովի գործունեությանը մասնակցում են հասարակական հիմունքներով:

6. Հանձնաժողովի նախագահը՝

1) կազմակերպում է հանձնաժողովի աշխատանքը.

2) հրավիրում և վարում է հանձնաժողովի նիստերը կամ նիստերի վարումը հանձնարարում է հանձնաժողովի անդամներից մեկին.

3) հաստատում է հանձնաժողովի նիստի օրակարգը.

4) զեկուցում է հանձնաժողովի նիստի օրակարգում ընդգրկված հարցերը կամ դրանց զեկուցումը հանձնարարում է հանձնաժողովի քարտուղարին.

5) իրականացնում է հանձնաժողովի գործառույթից և սույն աշխատակարգից բխող այլ լիազորություններ:

7. Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է հանձնաժողովի նիստերին.

2) ներկայացնում է առաջարկություններ՝ հանձնաժողովի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ.

3) իրականացնում է հանձնաժողովի գործառույթից և սույն աշխատակարգից բխող իրեն վերապահված այլ լիազորություններ:

8. Հանձնաժողովի նիստերին ավելի, քան երեք անգամ անընդմեջ անհարգելի պատճառով չմասնակցելու, ինչպես նաև մեկ տարվա ընթացքում հանձնաժողովի նիստերի կեսից ավելիին չմասնակցելու դեպքում հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության վարչապետին է դիմում հանձնաժողովի անդամի գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ առաջարկությամբ:

9. Հանձնաժողովն իր գործունեության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության վարչապետին է ներկայացնում տարեկան հաշվետվություններ՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա 1-ին եռամսյակի ավարտը:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

10. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք դռնփակ են և հրավիրվում են հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ՝ յուրաքանչյուր կիսամյակը մեկ անգամ, ինչպես նաև արտահերթ նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են ըստ անհրաժեշտության:

11. Հանձնաժողովն իր արտահերթ նիստերը գումարում է հրատապ հարցերի և խնդիրների լուծման համար՝ հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ կամ անդամների ընդհանուր թվի առնվազն 1/2-ի առաջարկությամբ:

12. Հանձնաժողովի նիստի օրակարգը՝ նիստի անցկացման վայրի, օրվա, ժամի նշումով, էլեկտրոնային եղանակով ներկայացվում է անդամներին նիստից ոչ ուշ, քան երեք օր առաջ: Հրատապ հարցերի ու խնդիրների լուծման համար գումարվող հանձնաժողովի արտահերթ նիստի անցկացման վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև նիստի օրակարգը հանձնաժողովի նախագահին և անդամներին ներկայացվում են էլեկտրոնային եղանակով հնարավորինս սեղմ ժամկետներում, իսկ անհնարինության դեպքում՝ գումարված նիստի ընթացքում:

13. Հանձնաժողովի նիստի օրակարգում նշվում են՝

1) հանձնաժողովի նիստի անցկացման վայրը, ամիսը, ամսաթիվը, տարեթիվը և ժամը.

2) քննարկման ենթակա հարցերը.

3) քննարկվող յուրաքանչյուր հարցով զեկուցողի անունը, ազգանունը:

14. Նիստերին կարող են հրավիրվել դատավորներ, միջազգային և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, պետական մարմինների՝ աշխատանքային խմբի նիստի օրակարգում ընդգրկված հարցերին առնչվող մասնագետներ ու փորձագետներ, գիտական, կրթական կազմակերպությունների ներկայացուցիչներ (խորհրդատվական ձայնի իրավունքով):

15. Նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է հանձնաժողովի կազմի առնվազն 2/3-ը:

16. Հանձնաժողովն ընդունում է խորհրդատվական բնույթի որոշումներ, որոնք ստորագրում է հանձնաժողովի նախագահը: Որոշումներն ընդունվում են քվեարկությամբ, նիստի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ: Հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

17. Հանձնաժողովի այն անդամը, ով համաձայն չէ ընդունված որոշմանը, կարող է ներկայացնել գրավոր կարծիք, որը կցվում է որոշմանը:

18. Հանձնաժողովի նիստն արձանագրվում է: Հանձնաժողովի նիստի արձանագրումն իրականացվում է համակարգչային եղանակով համառոտագրման կամ պարզ թղթային արձանագրման ձևով: Հանձնաժողովի նիստի արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները և հանձնաժողովի քարտուղարը:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

19. Հանձնաժողովի քարտուղարությունն իրականացնում է արդարադատության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն):

20. Նախարարությունը՝

1) ապահովում է հանձնաժողովի կազմակերպատեխնիկական աշխատանքների իրականացումը.

2) ապահովում է հանձնաժողովի նիստերի արձանագրումը.

3) կատարում է հանձնաժողովի ընթացիկ գործունեության ապահովմանն ուղղված այլ գործողություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

04.09.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ